Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Իջևանի թիվ 4 հիմնական դպրոց

Թեմա՝Ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդների կիրառումը առարկայի շրջանակներում

Վերապատրաստող, մենթոր՝ Լիլիթ Աղբալյան

Ուսուցիչ՝ Ալլա Ասիրյան

Իջևան 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ..... 6

1.Ուսուցման մեթոդների ընդհանուր բնութագիրը ..... 6

1.2 Ուսուցման մեթոդների տեսակները ..... 8

1.3 Ուսուցման մեթոդների դասակարգումը ..... 16

ԳԼՈՒԽ 2 ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ և ՓՈԽՆԵՐԳՈՒԾՈՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ

ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ..... 17

2.1 Ավանդական ուսուցման մեթոդ ..... 17

2.2 Փոխներգործուն ուսուցման մեթոդ ..... 20

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... 23

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... 26

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհում առկա սոցիալ քաղաքական և տնտեսական արագընթաց զարգացումը ապահովում է ոչ միայն հասարակության զարգացումը և նրա անդամների զարգածվածության մակարդակի բարձրացումը, այլ նաև հանդես է գալիս մի շարք խնդիրների առաջացման պատճառ: Գիտատեխնիկական զարգացումը ունենալով իր դրական ներզդեցությունը մարդու կյանքի և կեցության վրա, հնարավորություն է տալիս բավարարել նրա կենսագործունեության հիմնական պահանջները: Բայց քանի որ մարդը կենսասոցիալական էակ է և իր կենսագործունեության համակարգով պետք է կարողանա հարմարվի իր շուրջը տեղի ունեցող արագընթաց փոփոխություններին, ուստի այդ փոփոխությունները անհրաժեշտ է, որ ունենան կառուցողական և համակարգային տեսք:

Մարդու զարգացման հիմնական բաղադրիչներից կամ գործոններից մեկը հանդիսանում է կրթությունը, և այսօրվա պայմաններում այն պետք համապատասխանի ոչ միայն հասարակության և պետության պահանջներին, այլ հենց այն սուբյեկտի պահանջներին, որը անմիջականորեն ներգրաված է կրթության գործընթացի մեջ: Այդ առումով անհրաժեշտ է մանկավարժության գիտության մեջ վերափոխել թե կրթական չափորոշիչները, թե նրա բովանդակությունը և թե այն մեթոդները որոնց միջոցով կազմակերպվում է այն: Հաշվի առնելով ժամանակակից կրթության պահանջները, նրա ծավալն ու բովանդակությունը խնդիր է առաջանում այդ ամենի յուրացմանը հենց կրթության սուբյեկտի համար, ուստի մանկավարժության գիտությունը առաջարկում է մեթոդկան մոտեցումներ, որոնք հնարավորություն են տալիս կրթության արդյունավետ իրացման համար:

Ուսուցման մեթոդները դասավանդողի գործողությունների հաջորդական համակարգն է, որի նպատակը մանկավարժական այս կամ այն խնդրի լուծումն է կամ էլ որպես նախօրոք պլանավորված և համակարգված գործընթացի վերարտադրություն և իրականացում:

Արտասահմանում ժամանակակից Ուսուցման մեթոդների առավել նշանավոր դեմքերը և հեղինակներն են՝ Ջ. Քերոլը, Բ. Բլումը, Դ. Բրուները, Հ. Հեյսը, Վ.

Կոսկարելլին և այլք: Ռուս իրականության մեջ տեխնիկական մոտեցումների հեղինակ են՝ Պ. Յ. Գալպերինը, Ն. Ֆ. Տալիզինան, Յու. Կ. Բաբանսկին, Պ. Մ. Էրդիևը, Վ.Պ. Բեսպալկոն, Մ. Բ. Կլարինը և այլք:

Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել Ուսուցման ժամանակակից մեթոդները, անդրադառնալ նրա հասկացություններին և դասակարգմանը: Վերոհիշյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ **խնդիրներին՝**

1. Մեթոդների ընդհանուր բնութագրմանը
2. Ուսուցման մեթոդների դասակարգմանը
3. Ուսուցման տեսակներին տեսակներին
4. ուսուցնան ավանդական և փոխներգործուն մեթոդների կիրառմանը

Աշխատանքը կազմված է **ներածությունից, 2 գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից**:

**Ներածությունը** ընդգրկում է ուսումնասիրության օբյեկտը, արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ժամանակակից Ուսուցման մեթոդների առավել նշանավոր հեղինակների անվանումները, աշխատանքի ընդհանուր կառուցվածքը:

**Առաջին գլուխը** ընդգրկում է մեթոդների ընդհանուր բնութագրումը, դրա տեսակներն ու դասակարգումը:

**Երկրորդ գլուխը** ընդգրկում ուսուցման ավանդական և փոխներգուծոն մեթոդների կիրառումը առարկայի շրջանակներում:

**Եզրակացությունը** ընդգրկում է այն բոլոր եզրակացութունները որոնց հանգեցինք աշխատանքը կատարելու ընթացքում:

**Գրականության ցանկը** ընդգրկում է այն բոլոր աշխատությունները և ինտերնետային հղումները որոնք հիմք են հանդիսացել աշխատանքը կազմելու համար:

# ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

## 1.Ուսուցման մեթոդների ընդհանուր բնութագիրը

Կրթությունը տարրական դպրոցում հիմք է հետագա ուսուցման համար: Ներկայումս կրթությունը առաջնային է համարվում դպրոցականների համար, քանի որ դրանով է պայմանավորված նրանց անձնավորության ձևավորումը: Շատ կարևոր են ուսուցման ժամանակակից մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս ուսուցչին ուսումնական նյութը պարզ և հասկանալի մատուցելու համար: Դասի ժամանակ ուսուցիչը որքան հնարավոր է շատ մեթոդներ պետք է կիրառի, քանի որ դրանով է պայմանավորվաց ուսուցման բարձր որակի ապահովումը:

Ուսուցման մեթոդները ուսուցման համապարփակ ուղիներ են և ապահովում են ուսուցման գործընթացի ֆունկցիաների իրականացումը:

Մեթոդը սովորեցնողի և սովորողի համատեղ գործունեության ուղիների, եղանակների, հնարների համակարգ է, որը լուծում է դիդակտիկական որոշակի խնդիրներ: Մեթոդի ընդհանուր ֆունկցիան ուսումնական նյութի յուրացումն ապահովելն է սովորողի կողմից՝ նրա զարգացման գործընթացին ուղղություն տալու միջոցով:

Այսպիսով, ուսուցման մեթոդները կարևոր դեր և նշանակություն ունեն, որոնք առաջին հերթին ապահովում են ուսուցման բարձր որակը: Մեթոդների կիրառումը ապահովում է ուսումնական նյութի յուրացման բարձր մակարդակ, որը և հնարավորություն է տալիս աշակերտներին ավելի լավ հասկանալ ուսումնական նյութը, յուրացնել նրա բոլոր արդյունավետ կողմերը:

Բոլոր ժամանակներում ‹‹ինչպե՞ս սովորեցնել›› հարցը հուզել է գիտնականներին և պրակտիկ մանկավարժներին, հատկապես տարրական դպրոցի ուսուցիչներին, որովհետև կրթության որևէ օղակում ‹‹ինչպես սովորեցնել›› այնքան էական չէ, որքան տարրական դպրոցում: Ցանկացած գիտելիք հասցեատիրոջը հասցնելու համար անհրաժեշտ են մեթոդներ: Ուսուցման մեթոդը ուսումնական նպատակներին հասնելու ճանապարհն է, միջոցը: Ուսուցման մեթոդը ուսուցչի և

աշակերտների փոխգործակցության եղանակն է, այն ուղղված է ուսուցման խնդիրների լուծմանը: Մեթոդը ենթադրում է ուսուցման գործընթացում ուսուցչի և աշակերտների փոխգործակցության եղանակ, որի շնորհիվ աշակերտը յուրացնում է գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ, հմտություններ: Մեթոդը կրթական գործունեության նախագծված նպատակների և վերջնական արդյունքների միջև կապող օղակն է:

Մեր կարծիքով ուսուցման մեթոդները ապահովում են ուսուցչի և աշակերտների փոխադարձ ակտիվության բարձր մակարդակը, որի շնորհիվ ձևավորվում են աշակերտների գիտելիքները և կարողությունները, ինչպես նաև հմտությունները: Ուսուցման բարձր մակարդակի կազմակերպումը հնարավորություն է տալիս ուսուցչին նյութը աշակերտներին ավելի բարձր մակարդակով մատուցելու համար: Իսկ դասը տարբեր ուսուցման մեթոդներով անցկացնելը զարգացնում է աշակերտների խոսքը, մտածողությունը, տրամաբանությունը և մի շարք այլ կարողություններ:

Մասնագիտական գրականության մեջ ուսուցման մեթոդների վերաբերյալ կան մեկնաբանություններ, որոնք բովանդակային առումով միանշանակ չեն: Մի շարք մտածողներ հակված են այն մտքին, որ ուսուցման մեթոդը սովորողների ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման եղանակն է: Նրանց կարծիքով ուսուցչի խնդիրը սովորողներին ուսուցման գործընթաց ներգրավելն է, նրանց ակտիվ մասնակցության ապահովումը և ուսումնական գործունեության կազմակերպմանն աջակցելը: Այս մոտեցման հետևորդները որպես օրինակ բերում էին ինքնուրույն աշխատանքի մի քանի ձևեր, օրինակ՝ ստուգողական, թեստային աշխատանքները, համակարգչային մեթոդների կիրառումը: Այս առումով Ս.Ա. Սմիռնովն ուսուցման մեթոդները բնութագրում է որպես ‹‹սովորողների ումուսնաճանաչողական գործունեության կազմակերպում նախապես սահմանված խնդիրներով, ճանաչողական գործունեության մակարդակներով, ուսումնական գործողություններով և դիդակտիկ նպատակներին հասնելու ակնկալվող արդյունքներով››:

Ընդհանրացնելով՝ կարող ենք սահմանել, որ ուսուցման մեթոդներն ուսուցչի կողմից սովորողների ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման եղանակներն են՝ միտված անձի կրթությանը և զարգացմանը՝ ըստ առաջադրված խնդիրների: Ասվածներից հասկացանք, որ կրթական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե ուսուցումը որքանով է ուղղորդված դեպի սովորողները, ինչպես են մատուցվում, գնահատվում սովորողների գիտելիքները, նրանց կարողությունները և հմտությունները: Ուսուցիչը Ուսուցման որևէ մեթոդ ընտրելիս նախ և առաջ պետք է հաշվի առնի իր աշակերտների տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրությունների շրջանակը, ունակությունների մակարդակը: Ուսուցումն ակտիվացնելու համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կարող են նպաստել աշակերտների ակտիվացմանը: Դեռևս նախադպրոցական տարիքում երեխայի հիշողությունը մեխանիկական է: Իսկ մեխանիկական հիշողությունը հանգեցնում է նյութի արագ մոռացմանը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է օգտագործել այնպիսի հնարներ և միջոցներ, որպեսզի աշակերտը հեշտությամբ յուրացնի ստացած գիտելիքները և կարողանա այն պահպանել իր հիշողության մեջ:

## 1.2 Ուսուցման մեթոդների տեսակները

**Ուսուցման ավանդական (վերարտադրողական) մեթոդ**

Այս մեթոդն հիմնված է գիտելիքի, կարողությունների և հմտությունների փոխանցման վրա: Սա ապահովում է սովորողների՝ կրթության բովանդակության յուրացումը, դրա որակի ստուգումը և գնահատումը վերարտադրության մակարդակով:

Սա հին ժամանակներից եկող մեթոդ է, որը դեռ շատ տարածված է այսօրվա դպրոցում, հատկապես միջնակարգ դպրոցում: Այս մեթոդի էությունը հետևյալ գծապատկերն է՝ նոր նյութի ուսուցում - ամրապնդում – ստուգում - գնահատում: Այս մեթոդի հիմքում ընկած է կրթական պարադիգման, համաձայն որի կարելի է որոշել

սովորողի բավարար կեցությունը և գործունեությունն ապահովող անհրաժեշտ գիտելիքի ծավալը և փոխանցել սովորողին: Ուսուցման հիմնական մեթոդներն են բացատրությունը՝ համակցված իրազննական նյութերով: Սովորողների գործունեության առաջատար ձևերն են լսելը և մտապահելը, իսկ գլխավոր պահանջը և արդյունավետության չափանիշը սովորածի անսխալ վերարտադրությունն է:

Ավանդական մեթոդն սովորողին դիտում է իբրև վերարտադրողական բնույթի կատարող: Ուսուցչի գործողություններն են բացատրությունը, ցուցադրումը, սովորողի կատարածի գնահատումը և սխալների շտկումը:

Այս մեթոդն ունի մի շարք կարևոր առավելություններ. սա ժամանակ է տնտեսում, օգնում է, որ սովորողներն արագ հասկանան ուսումնական բարդ նյութը, ապահովում է կրթական-դաստիարակչական գործընթացի արդյունավետ կառավարումը, հնարավոր է դարձնում գիտելիքի հաղորդման նորանոր ձևերի որոնումը:

Սրանով հանդերձ՝ավանդական մեթոդն ունի որոշակի թերություններ. ուսումնական գործընթացի անհատականացման և տարբերակման աննշան հնարավարություններ, սովորողների մտածողական որակների թերզարգացա-ծություն:

**Փոխներգործուն ուսուցման մեթոդ**

Ուսուցման փոխներգործուն մեթոդների դասին են պատկանում նաև վարպետության դասերը, կարծիքների սանդղակի կառուցումը, լուծումների ծառը[11]: Այսպիսով, ուսուցման փոխներգործուն մեթոդները օգնում են ուսուցման գործընթացը դարձնել ավելի իմաստալից, տրամաբանորեն ավարտված, էմոցիոնալ և, որպես հետևանք, ավելի արդյունավետ: Կիրառելով փոխներգործուն այս մեթոդները դասը դառնում է ավելի հետաքրքրաշարժ, աշակերտները մեծ հաճույքով են սկսում աշխատել և սովորել, որն էլ ուսուցչի գերագույն խնդիրն է համարվում: Նույնիս իրենք են

ցանկություն հայտնում մասնակցել դասերին և հաճախել դպրոց, քանի որ աշակերտները չեն սիրում միանման և միապաղաղ դասերը:

Փոխներգործուն ուսուցման մեթոդներից են՝

- Կլոր սեղան (քննարկում, բանավեճ) — մեթոդի խմբային տեսակ, որը ենթադրում է խնդրի կոլեկտիվ քննարկում, առաջարկությունների, գաղափարների, կարծիքների կոլեկտիվ քննարկում և լուծման համատեղ որոնում:
- Բիզնես խաղեր (այդ թվում, դերային, իմիտացիոն) — բավականին հայտնի մեթոդ է, որը կարող է կիրառվել նույնիսկ տարրական դպրոցում: Խաղի ընթացքում
- սովորողները խաղում են մասնակիցների այս կամ այն դերերը տվյալ իրավիճակում, փորձում են իրենց վրա տարբեր մասնագիտություններ:

**Համագործակցային ուսուցման մեթոդ**

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: «Թալմուդը հասկանալու համար պետք է ընկեր ունենալ»,- գրված է Թալմուդում: Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում: Իսկ 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ սովորողները շահում են երբ սովորում են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշի: 18-րդ դարում Լանքաստերը և Բելլը Անգլիայում կիրառում են սովորողների փոխուսուցումը:

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են հիմնականում երեք տեսություններ՝ սոցիալական փոխկախվածության, ճանաչողության զարգացման, վարքագծային ուսումնառության:

Վիգոտսկին ասում էր՝ գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիր, և ծնվում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում գործադրած համատեղ ջանքերով: Նյութը վերապատմելու կամ վերաշարադրելու ընթացքում սովորողներն արդեն ձևավորված ճանաչողական կառուցվածքներում որոշակի փոփոխություններ են կատարում: Հետևաբար, ըստ Վիգոտսկու, մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է: Իսկ Ջերոմ

Բրունները մշակեց հետազոտական ուսուցման գաղափարը, որը շրջադարձային եղավ: Նա ներկայացնում է ճանաչողական ուսուցման մի մոդել, որտեղ տեղեկությունն անցնում է ընկալում-դասակարգում-յուրացում շղթայով և վերաճում գիտելիքի՝ հիմնվելով ոչ թե ինչ սովորելու, այլ ինչպես սովորելու սկզբունքի վրա:

Ներկայումս համագործակցային ուսուցումը լայն տարածում ունի սկանդինավյան երկրներում և ԱՄՆ-ում:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.
- հոգեբանական և ֆիզիկական առաղջության ապահովումը.
- սթրեսի հաղթահարումը.
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը.

**Զարգացնող ուսուցման մեթոդ**

Այս մեթոդն առավել ընդունվածը և տարածվածն է: Այս մեթոդն կյանքի կոչողներից են Վիգոտսկին, Զանկովը, Էլկոնինը, Դավիդովը և այլք: Զարգացնող ուսուցման գաղափարների կայացման հարցում նշանակալից է Վիգոտսկու և նրա երկերի դերը. Վիգոտսկուն է պատկանում մշակութային-պատմական տեսություն կիրառումը մարդու հոգեկանի զարգացման գործում:

Մինչև Վիգոտսկին կարծում էին, թե երեխայի զարգացումը, հատկապես ինտելեկտի կամ մտավոր որակների զարգացումը պայմանավորված է ուսուցման և դաստիարակության գործոնով: Վիգոտսկին ապացուցեց, որ մանկավարժությունը պիտի հիմնվի երեխայի զարգացման ոչ թե անցած, այլ վաղվա՝ եկող օրվա վրա:

Միայն այդ դեպքում նա կարող է ուսուցման գործընթացում կյանքի կոչել զարգացման այն գործընթացները, որոնք տվյալ պահին գտնվում են “մոտալուտ զարգացման տարածքում:” “Մոտալուտ զարգացման տարածք” ասելով՝ Վիգոտսկին հասկանում էր, որ զարգացման որոշակի փուլում երեխան, մեծահասակի ղեկավարությամբ և առավել խելացի ընկերների հետ համագործակցելով, կարող է ուսումնական խնդիրներ լուծել:

Սակայն մինչև Զանկովի ուսումնասիրությունները Վիգոտսկու գաղափարները պահանջարկ չունեին ուսուցման գործի դիդակտիկայում և պրակտիկայում: Զանկովին հաջողվեց տարրական դպրոցում անցկացված մանկավարժական փորձի հիման վրա ապացուցել, որ կարելի է արագացնել դպրոցականների զարգացումը ուսուցման արդյունավետության բարձրացման շնորհիվ: Լ. Վ. Զանկովը հաստատում էր, որ ծրագրային նյութն ուսուցանելիս հարկ է արագորեն առաջ գնալ: Անցած նյութի բազմաթիվ, միօրինակ կրկնությունները ուսուցման տեմպը դանդաղեցնում են և վրիպումների պատճառ են դառնում կամ էլ ուսուցման բարձր մակարդակով կազմակերպումը դարձնում են անհնար:

Զարգացնող ուսուցման մեթոդն ակտիվորեն մշակել են նաև Դ. Բ. Էլկոնինը, Վ. Վ. Դավիդովը և նրանց բազմաթիվ աշակերտները: Էլկոնինը, նկատի ունենալով դպրոցականների տարիքային առանձնահատկությունները, հիմնեց ուսուցման համակարգված գործունեական մոտեցումը:

**Կոլեկտիվ համագործակցության մեթոդ**

Կոլեկտիվ համագործակցության մեթոդն (կազմակերպված երկխոսություն, համակցված երկխոսություն, ուսուցման կոլեկտիվ սկզբունք, սովորողների փոփոխվող զույգերով աշխատանքը) մշակել են Ա. Գ. Ռիվինը և նրա աշակերտները՝ Վ. Վ. Արխիպովան, Վ. Կ. Դյաչենկոն, Ա. Ս. Սոկոլովը և այլք:

Այս մեթոդն ներառում է երեք բաղադրատարր՝

1.ուսումնական նյութի նախապատրաստում.

2.սովորողների կողմնորոշումը կամ դիրքորոշումը.

3.ուսումնական պարապմունքի ընթացքի մեթոդն.

Ուսումնական նյութի նախապատրաստումը ուսումնական տեքստերի, լրացուցիչ և տեղեկատու գրականության, ուսումնական նյութի բաժանումը որոշակի հատվածների (պարբերություններ, հատվածներ), նպատակային, այդ թվում նաև տնային առաջադրանքների մշակում:

Կոլեկտիվ համագործակցության տեխնիկայի կիրառման ժամանակ ամեն սովորող աշխատում է իրեն հատուկ անհատական տեմպով. նա պատասխանատու է ոչ միայն իր, այլև ողջ կոլեկտիվի աշխատանքի և հաջողության համար, ձևավորվում է անձի համարժեք գնահատականը սեփական հնարավորությունների և կարողութ յունների, արժանիքների և թերությունների հանդեպ: Ուսուցիչն այլևս կարիք չունի դանդաղեցնելու կամ արագացնելու այս կամ այն սովորողի առաջադիմության տեմպը, որն էլ դրականորեն է ազդում կոլեկտիվի միկրոկլիմայի վրա: Նույն տեղեկության քննությունը մի քանի դասընկերների հետ մեծացնում է ասսոցիատիվ կապերի քանակը, հետևաբար նաև ապահովում է նյութի առավել խորը յուրացումը:

**Լիակատար (ամբողջական) յուրացման մեթոդ**

Այս մեթոդի հեղինակներն են ամերիկացի գիտնական-մանկավարժներ Ջ. Քերոլը և Բ. Բլումը: Ռուսական մանկավարժության մեջ այս մեթոդի հանգամանալից նկարագրությունը տալիս է Մ. Վ. Կլարինը: Այս մեթոդն տարբերվում է ավանդականից (դաս-դասարանային համակարգից) իր վերջնարդյունքով: Դաս-դասարանային համակարգի դեպքում բոլոր սովորողներին միևնույն ժամանակահատվածում կատարելու և յուրացնելու համար տրվում է նյութի նույն բովանդակությունը և ծավալը: Ստացվում են բավական տարբեր և ոչ միանշանակ արդյունքներ: Սովորողների մի մասը լավ է յուրացնում նյութը, մյուսները՝ վատ, իսկ ոմանք էլ տեղեկության մի մասն ընդհանրապես չեն յուրացնում, այսինքն՝ գիտելիքների յուրացման աստիճանը տարբեր է:

Լիակատար յուրացման մեթոդն տալիս է բովանդակային նույն նյութը, դրա հետևանքով նույն կարողությունների և հմտությունների ձերքբերումն է նախատեսում, սակայն յուրաքանչյուր դպրոցականի համար նախատեսում է անհատական ժամանակային փուլ, մեթոդներ, ձևեր, աշխատանքային պայմաններ:

Այս մեթոդի բնորոշ գիծը ուսուցման պլանավորված արդյունքներն են: Դա լիակատար յուրացման չափանիշն է: Չափանիշը տրվում է ընդհանրացված, միավորված տեսքով՝ նպատակների աստիճանակարգի օգնությամբ, այսինքն՝ մանկավարժական նպատակների փոխկապակցված աստիճանավորման

սկզբունքով, որոնք մշակված են մտածողական, զգայական և հոգեշարժողական ոլորտների համար:

**Հարմարվողական (ադապտացիոն) ուսուցման մեթոդ**

Այս մեթոդն տարամակարդակ ուսուցման մի տեսակն է, որը նախատեսում է ուսումնական պարապմունքների ճկուն կազմակերպում՝ հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները: Այստեղ կենտրոնական դեմքը սովորողն է. շեշտադրվում են նրա գործունեությունը, նրա անձնային որակները: Հատուկ տեղ է հատկացվում սովորողների ուսումնական կարողությունների ձևավորմանը:

Հարմարվողական մեթոդի կիրառման դեպքում ուսուցիչն աշխատում է ամբողջ դասարանի հետ (հաղորդում է նոր նյութը, բացատրում է, ցույց է տալիս, վարժեցնում է և այլն) և անհատապես (ղեկավարում է սովորողների անհատական աշխատանքը, հսկում և ստուգում է և այլն): Սովորողների գործունեությունը ծավալվում է ուսուցչի հետ, անհատապես, դարձյալ ուսաուցչի հետ և ինքնուրույն՝ ուսուցչի ղեկավարությամբ:

Հարմարվողական մեթոդի պայմաններում ուսումը հիմնականում դառնում է ակտիվ, ինքնուրույն գործունեություն. Դա պարտադիր և լրացուցիչ գրականության ընթերցումն է, զեկուցումներ պատրաստելու աշխատանքն է, տարբեր բարդության խնդիրների լուծումն է, լաբորատոր և գործնական աշխատանքներն են, անհատական աշխատանքն է ուսուցչի հետ, գիտելիքների ձեռքբերման հսկողությունն է և այլն:

Հարմարվողական մեթոդն նախատեսում է ստուգման բոլոր տեսակները՝ ուսուցչի հսկողությունը, ինքնահսկողություն, սովորողների փոխադարձ հսկղություն, հսկողություն տեխնիկական միջոցներով և ոչ մեքենայական հսկող ծրագրերով և այլն: Հակառակ միայն մեկ ուղղությամբ ընթացող հետադարձ կապի (ուսուցիչ - աշակերտ), որը լավ չի իրականացնում ուսուցման գործառությունը, ներդրվում է բազմալիք հետադարձ կապեր (ուսուցիչ - աշակերտ, աշակերտ – ուսուցիչ, աշակերտ

- աշակերտ, ուսուցիչ սովորողների կելեկտիվ, ածակերտ – սովորողների կոլեկտիվ), որը նախատեսում է փոխհարաբերությունների բացառապես այլ ձևեր:

**Մոդուլային ուսուցման մեթոդ**

Այս մեթոդի էությունն այն է, որ սովորողին տրվում է որոշակի թեմայի համար մշակված ուսումնական նյութի փաթեթ՝ մոդուլ, որը սովորողն ինքնուրույն ուսումնասիրում և յուրացնում է: Մոդուլը մի ամբողջություն է, որի մեջ մտնում են թե՛ ուսումնական նյութի բովանդակությունը, թե՛ դա յուրացնելու մեթոդն: Մոդուլը կազմված է՝

- գործողությունների նպատակային պլանից
- տեղեկատվության կամ նյութի շարադրանքից
- ուսուցման գործընթացը կարգավորող մեթոդական ցուցումներից

Այս մեթոդն կիրառելու դեպքում ուսուցիչը պետք է մշակի յուրաքանչյուր դասարանի ուսումնական նյութին համապատասխան մոդուլային ուսումնական ծրագիր, ընդգծի դրանցից ամեն մեկի նպատակները:

**Մոդուլները երեք տեսակ են լինում՝**

- ճանաչողական, որոնք կիրառվում են գիտության հիմունքների ուսուցման ընթացքում
- գործառնական, որոնք անհրաժեշտ են գործունեության եղանակների ձևավորման և զարգացման համար
- խառը, որոնք ներառում են առաջին երկու տեսակները.

Մոդուլային մեթոդի կիրառման դեպքում սովորողը վարժվում և սովորում է ինքնուրույնության, նախաձեռնության, կազմակերպվածության, աշխատանքի ծրագրման և պլանավորման, ինքնահսկման և ինքնագնահատման: Սովորողը գիտակցված և իմաստավորված մոտեցում է հանդես բերում ուսումնական գործընթացի հանդեպ, սովորում է տեսնել իր գիտելիքների և կարողությունների ուժեղ և թույլ կողմերը, դրանց ձեռքբերման աստիճանը:

Այս մեթոդն ուսուցչին հնարավորություն է տալիս կազմակերպելու անհատական աշխատանք ամեն մի սովորողի հետ:

Մոդուլները կարող են կիրառվել ուսուցման կազմակերպման ցանկացած ոլորտում և բարելավել ուսումնառության գործընթացը և ապահովել դրա արդյունավետության բարձրացմանը: Մոդուլային և ավանդական ուսուցման մեթոդների համատեղումը խիստ արդյունավետ կարող է լինել:

## 1.3 Ուսուցման մեթոդների դասակարգումը

Ուսուցման մեթոդներն ունեն դրսևորման երկու ձև. մի դեպքում դրանք բխում են տեսությունից (Բեսպալկո, Դավիդով, Դյաչենկո, Զանկով, Գալպերին, Կուզմին), մի այլ դեպքում մեթոդները սկիզբ են առնում պրակտիկայից (Իլյին, Լիսենկովա, Շատալով, Շեյման):

Ժամանակակից դիդակտիկայում ներկայացված են տարաբնույթ մեթոդներ, քանի որ յուրաքանչյուր հեղինակ և դասավանդող մանկավարժական գործընթացի մեջ ներմուծում է ինչ-որ նոր և անհատական գիծ:

Սակայն բազմաթիվ նմանություններից և ընդհանուր հատկանիշներից ելնելով՝ դասակարգվում է մեթոդների հետևյալ տեսակները՝

- ըստ կիրառման մակարդակի. ընդհանուր մանկավարժական, մասնավոր մեթոդոլոգիական (առարկայական) և լոկալ կամ տեղայնացված (մոդուլային).
- ըստ փիլիսոփայական հիմնավորման. գիտական և կրոնական, մարդասիրական և բռնապետական.
- ըստ փորձի յուրացման գիտական հայեցակարգի. զուգորդական-ռեֆլեկտորային, բիհեվորիստական, զարգացնող.
- Ըստ անհատական կառուցվածքի կողմնորոշման. տեղեկատվական, գործառնական, փորձարարական.
- ըստ ուսուցման ավանդական համակարգի արդիականացման բնույթի.

Ուսուցման մեթոդները դասակարգվում են նաև ըստ գերակշռող հատկանիշ ունեցող նպատակների և գերխնդիրների, ըստ ուսուցման կազմակերպման գործադրվող ձևի, ըստ գերակշռող մեթոդների, որոնք առավել շատ են գործածվում, և ըստ այլ հիմնավորումների:

Սակայն ժամանակակից դիդակտիկայում առկա է Ուսուցման մեթոդների վերլուծության ընդհանրական պլան: Յուրաքանչյուր մեթոդի կիրառման դեպքում հեղինակը պետք է նկատի ունենա՝

- դրա գործադրման մակարդակը.
- փիլիսոփայական հիմնավորումը.
- գիտելիքների յուրացման առաջատար հայեցակարգը.
- կրթության բովանդակության առանձնահատուկ բնույթը.

## ԳԼՈՒԽ 2 ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ և ՓՈԽՆԵՐԳՈՒԾՈՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

### 2.1 Ավանդական ուսուցման մեթոդ

Ժամանակակից կրթության նպատակները փոքր-ինչ փոփոխվել են, փոխվել է բարոյական դաստիարակության բնույթը, սակայն մի շարք ուսումնական չափանիշներ մնացել են նույնը: Սա նշանակում է, որ ավանդական ուսուցման մեթոդն շարունակվում է կիրառվել կրթական համակրգում և պահպանում է իր գերակայությունը գիտելիքի հաղորդման պարագայում:

Այսօր կիրառելի են բազմաթիվ Ուսուցման մեթոդներ՝ ավանդական և նորարական: Մենք չենք կարող հստակ ասել, որ պետք է հրաժարվել ավանդական մեթոդից և օգտագործել միայն նորարական մեթոդները, քանի որ դասավանդման լիարժեք դեղատոմս գոյություն չունի, և որի դեպքում լիարժեք ու դրական արդյունք կունենանք ոչ ոք չգիտի: Ավանդական ուսուցման մեթոդն դաս-դասարանային համակարգի հիմքն է: Ավանդական ուսուցում տերմինը նշանակում է ուսուցման

կազմակերպում, որը 17-րդ դարի սկզբներին ձևակերպել է Յ. Ա. Կոմենսկին իր <<Մեծ դիդակտիա>> գրքում: Ավանդական ուսուցման բովանդակությունը մեր երկրում զարգացել է հիմնականում խորհրդային ժամանակաշրջանի հանրակրթական դպրոցներում:

Նախ ներկայացնենք, թե ինչ է իրենից ներկայացնում ավանդական ուսուցումը:

Ավանդական ուսուցման մեթոդն հիմնված է բացատրական-ցուցադրական մեթոդի վրա: Ավանդական ուսուցման ժամանակ դասը բաժանվում է երկու հատվածի՝ հին նյութի հարցում և նոր նյութի հաղորդում: Այս գործընթացը կրկնվում է ամեն օր և սովորողը մի դասին հասցնում է առնվազն 2-3 անգամ լսել միևնույն նյութը, չհաշված, որ ինքն այդ նյութը լսել է նաև նախորդ դասին, երբ դասավանդողը հաղորդում էր նոր նյութը: Հենց այս ամենն էլ ձանձրույթ է պատճառում ժամանակակից սովորողին, որը ակտիվություն է ուզում: Այս պարագայում անտեսվում են սովորողի մի շարք որակական հատկանիշներ, որոնք նրան կարող են մղել ինքնազարգացման: Մենք առաջարկում ենք ավանդական ուսուցման ժամանակ կիրառել տարբեր նորարական մեթոդներ՝ կրթական բարձր մակարդակ ապահովելու և ժամանակակից պահանջները կատարելու նպատակով: Օրնակ՝ ֆիզիկայի դասին կարելի է ավանդական ուսուցման մեթոդի հետ համատեղ կիրառել նաև տեղեկատվական ուսուցման մեթոդն: Դրա համար անհրաժեշտ է պատկերացում ունենալ բոլոր մեթոդների մասին և կատարել ճիշտ ընտրություն, որը կախված է բազմաթիվ գործոններից՝

- սովորողների տարիք,
- թեմայի արդիականություն և հրատապություն,
- սովորողների ընդգրկվածություն,
- սովորողների ինտելեկտուալ մակարդակ և այլն:

**Ավանդական ուսուցման դեպքում.**

- խմբում հավաքվում են միևնույն տարիքի երեխաներ, որոնք ունեն տարբեր ինտելեկտուալ մակարդակ,

- խումբն աշխատում է ըստ ժամանակացույցի՝ մեկ տարեկան պլանի և ծրագրի համաձայն,
- դասաժամը տրվում է մեկ ուսումնական առարկայի և բոլոր սովորողները սերտում են միևնույն նյութը,
- դասարանում սովորողների աշխատանքը գլխավորում է ուսուցիչը:

Ավանդական ուսուցման մեթոդի հիմնական բացասական հատկանիշներն են.

- կրթել ուսանողությանը պատրաստի նյութի մատուցման միջոցով, պատրաստի գիտելիքների հաղորդում,
- ուսուցման գործընթացի երեք հիմնական գործառույթներն են՝ հաղորդում, վերահսկում և գնահատում,
- հաշվի չի առնվում ուսանողի մտավոր ունակությունների փոփոխությունները, մեխանիկական հիշողություն:

Ավանդական ուսուցման նպատակը հիմականում գիտելիքների հաղորդումն է, մասամբ էլ հմտությունների ձևավորումը: Այս մեթոդի կիրառման դեպքում անտեսվում է կրթության ժամանակակից պահանջը՝ ապահովել անհատի համակողմանի և ներդաշնակ զարգացումը: Այս մեթոդն կիրառելիս հաշվի չի առնվում սովորողի անհատական ունակությունները, հետին պլան են մղվում ստեղծագործական ունակությունները: Ավանդական մեթոդն հիմնականում կիրառում է ավտորիտար մանկավարժության պահանջները: Ուսուցման գործընթացում ավտորիտարիզմը կարգավորում է սովորողների ուսումնական գործընթացը, ինչպես նաև հնարավորություն է տալիս վերահսկելի դարձնել այդ գործընթացը:

Ինպես ցանկացած մեթոդ, ավանդական ուսուցումը ևս ունի դրական կողմեր.

- Համակրգված ուսուցում,
- Կազմակերպչական պարզություն,
- Զանգվածային կրթության նվազագույն ռեսուրսների օգտագործում,
- Վերարտադրողականության զարգացում,
- Բանավոր ներկայացում:

Պետք չէ հրաժարվել ավանդական ուսուցումից, պարզապես պետք է աննկատելիորեն և ճիշտ համադրել նորարական մյուս մեթոդների հետ և ուսուցման արդյունքը կլինի դրական: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք ուսումնասիրել մյուս մեթոդները ևս՝ կրթության որակը բարձրացնելու նպատակով:

## 2.2 Փոխներգործուն ուսուցման մեթոդ

Փոխներգործուն մեթոդների հիմքում երեխայի ինքնուրույն ուսումնական գործունեությունն է, ինչպես նաեւ գիտելիքի ձեռքբերման ընթացքին նրա անմիջական ու գործուն մասնակցությունը:

Բազմաթիվ հիմնական մեթոդական նորարարություններ այսօր կապվում ենուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի կամ համակարգչի հետ: Այն ուսուցողական մեթոդ է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության եւ ուսումնառության խնդիրների լուծման, երեխայի ազատության վրա: Չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձեւեր: Ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի: Դաստիարակի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել եզակի իրավիճակին:

Այս մեթոդների առանձնահատկությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ երեխաը գիտելիք է ձեռք բերում ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի, ընդգրկվելով թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներում: Այդ կերպ նա յուրացնում է համագործակցային, սոցիալական փոխազդեցության եւ հաղորդակցական, ինչպես նաեւ ձեռք բերած գիտելիքը կիրառելու կարողություններ:

Փոխներգործուն մեթոդներով ուսուցումը ենթադրում է գիտելիքների ու մտքերի փոխանակում, որը նպատակաուղղված է ոչ միայն նոր գիտելիքներ ստանալուն, այլեւ զարգացնում է իմացական գործընթացը՝ այն հնարավորինս ակտիվացնելով, ստեղծելով այնպիսի միջավայր, որում երեխաը դառնում է իր ուսուցումը

կազմակերպող անձ՝ գործընթացի սուբյեկտ՝ ինքնուրույնության բարձր աստիճանով: Ուսուցման փոխներգործուն մեթոդները նպաստում են նաեւ միջանձնային հարաբերությունների մշակույթի ձեւավորմանը, քննադատական մտածողության զարգացմանը:

Պարապմունքների ընթացքում ժամանակ փոխներգործուն մեթոդների եւ հնարների կիրառումը հրաշալի արդյունք կարող է ապահովել, երբ խոսքը վերաբերում է երեխաների շրջանում ճանաչողական կամ ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ինչպես նաեւ երեխաների ու մանկավարժների միջեւ փոխազդեցությանը :

Փոխներգործուն մեթոդների կիրառման կանոններն են.

1.երեխաներից ոչ մեկը չի կաշկանդվում՝ մտածելով, որ ինքը կարող է սխալվել,

2.դիմացինի կարծիքը չի մերժվում ոչ մեկի կողմից,

3.ցանկացած կարծիք կամ գաղափար խրախուսվում է:

Փոխներգործուն մեթոդներն արդյունավետ են հատկապես խմբային աշխատանքների կամ համագործակցային ուսուցման ժամանակ: Խմբի բոլոր անդամները պատասխանատու են դառնում նյութը յուրացնելու համար: Խմբային աշխատանքի մի մասը կարելի է առանձնացնել եւ կատարել անհատապես, սակայն մեծ մասը պահանջում է փոխգործուն աշխատանք, ընդ որում՝ խմբի անդամները մշտապես արձագանքում են միմյանց կատարած աշխատանքին, հարցեր են տալիս, քննարկում են կատարած եզրահանգումները եւ այլն: Փոխներգործուն մեթոդներով ուսուցման ժամանակ երեխաները դրսեւորում են բարձրակարգ մտածողություն, նյութի ավելի խորքային ընկալում, ավելի լուրջ վերաբերմունք ուսումնառության գործընթացին:

Ավանդականների հետ համեմատած, ուսուցման ինտերակտիվ մոդելներում փոխվում է նաեւ փոխգործակցությունն դաստիարակի հետ. նրա ակտիվությունն իր տեղն է զիջում երեխաների ակտիվությանը: Ուսուցչի խնդիրն է ստեղծել պայմաններ նրանց նախաձեռնության համար: Ինտերակտիվ մեթոդներում երեխաները հանդես

են գալիս որպես լիիրավ մասնակիցներ, նրանց փորձը պակաս կարեւոր չէ դաստիարակի փորձից: Վերջինս ոչ այնքան տալիս է պատրաստի գիտելիքներ, որքան խթանում է երեխաների ինքնուրույն որոնումը: Ինտերակտիվ մեթոդներում ուսուցիչը հանդես է գալիս մի քանի հիմնական դերերով: Նրանցից յուրաքանչյուրում նա կազմակերպում է մասնակիցների փոխգործողությունը տեղեկատվական միջավայրի այս կամ այն հատվածի հետ: Իրազեկիչ-փորձագետի դերում ուսուցիչը շարադրում է տեքստային նյութը, ցուցադրում տեսաշարքը, պատասխանում մասնակիցների հարցերին, հետեւում է գործընթացի արդյունքներին եւ այլն: Կազմակերպչի դերում նա կազմակերպում է երեխաների փոխգործակցությունը սոցիալական եւ ֆիզիկական շրջապատի հետ (բաժանում է խմբերի, խթանում է նրանց ինքնուրույն տվյալներ հավաքելը, համաձայնեցնում է առաջադրանքների կատարումը եւ այլն): Խորհրդատուի դերում ուսուցիչը դիմում է երեխաների փորձին, օգնում է գտնել արդեն ձեւակերպված խնդիրների լուծումը, ինքնուրույն ձեւակերպել նորերը եւ ալն:

Փոխներգործուն մեթոդների դերը՝

- մտածողության զարգացում,
- առաջնային գիտելիքի ձեռք բերում,
- հաղորդակցական միջավայրի ստեղծում,
- ճանաչողական ակտիվության խթանում,
- ուսուցանողի եւ ուսանողների ընդգրկուն փոխազդեցություն,
- հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձեւավորում,

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնե- լու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի:

Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է:

Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Ուսումնասիրելով մանկավաժական մեթոդների մի քանի տեսակներ, կատարելով որոշակի ուսումնասիրություններ, կարելի է փաստել, որ Ուսուցման մեթոդների ճիշտ և տեղին կիրառումը հանգեցնում է ուսուցման որակի բարձրացմանը, սովորողի մեջ ձևավորելով նոր գաղափարներ ու հետաքրքրություններ:

Տեսական վերլուծություններից կարելի է փաստել հետևյալ եզրակացությունները՝

- Ուսուցման մեթոդները դասավանդողի գործողությունների հաջորդական համակարգն է, որի նպատակը մանկավարժական այս կամ այն խնդրի լուծումն է կամ էլ որպես նախօրոք պլանավորված և համակարգված գործընթացի վերարտադրություն և իրականացում:
- Ուսուցման մեթոդմերի դասակարգումը հանգեցնում է այն եզրակացությանը, որ յուրաքանչյուր Ուսուցման մեթոդ դասակարգվում է բազմաթիվ նմանություններից ու ընդհանուր հատկանիշներից ելներով: Եվ յուրաքանչյուր մեթոդի կիռարման դեպքում պետք է նկատի ունենալ դրա գործադրման մակարդակը, փիլիսոփայական հիմնավորումը, գիտելիքների յուրացման առաջատար հայեցակարգը և կրթության բովանդակության առանձնահատուկ բնույթը:
- Ուսուցման մեթոդների տեսակների ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացությանը, որ յուրաքանչյուր մեթոդ ունի իր առանձնահատկությունները և օժանդակում է դասավանդողների գործունեութանը, դարձնելով այն բազմաբովանդակ, համապատասխան սովորողի հետաքրքրություններին, որոնք նպաստում են փոխկապակցված, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը: Սովորողների համար օգտակար և արդյունավետ է սովորել այնպիսի մեթոդական հնարներով, որոնք զարգացնում են քննադատական, ստեղծագործական մտածողության հմտությունները, ինքնուրույն մտածելու կարողությունը և նպաստում են այլ բազմաթիվ հմտությունների զարգացմանը:

- Վերլուծելով ուսուցման փոխներգործուն մեթոդների վերաբերյալ գիտական գրականությունը, հանգեցինք այն եզրակացության, որ տարրական դպրոցի ուսուցման գործընթացում դրանց կիրառումը նպաստում է թիմում աշխատելու, համագործակցելու, բանավիճելու, սեփական տեսակետը ազատ արտահայտելու կարողությունների ձևավորմանը:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ասատրյան Զ. ‹‹Տարրական կրթության մանկավարժություն›› ուսումնամեթոդական ձեռնարկ(դասախոսությունների ժողովածու), Եր., Տիգրան Մեծ, 2017. - 160 էջ:
2. Հայկ Պետրոսյան, Մանակավարժական ժամանակակից մեթոդներ, Երևան 2012.-564 էջ
3. Беспалько В. П., Педагогика и прогрессивные технологии обучения.
4. Гальскова Н.Д., Гез Лингводидактика и методика: учебное пособие. М.: Академия, 2007.-336с.
5. Зимняя И.А. Педагогическая психология: учебник для вузов. М.: Логос, 2003.-287 с Н.И. Теория обучения иностранным языкам.
6. Технология интенсификации обучения на основе схемных и знаковых моделей (Е. В. Меркулова)


## ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ՀՂՈՒՄՆԵՐ


1. https://banber.eiu.am/index.php/banber/article/view/209 (26.04.2023)
2. www.ysu.am/files/7-1510223938-.pdf (26.04.2023)